

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ «Տեխնոլոգիա»

**Թեմա՝ «Տեխնոլոգիա առարկայի դասավանդման նպատակն ու խնդիրները, սովորողներին ներկայացվող պահանջներն ըստ կրթական աստիճանների»**

**Կազմեց՝ Լուսինե Հարությունյան Յուրիկի**

(անուն ,ազգանուն ,հայրանուն)

**«Քաջարանի թիվ 1 միջն. դպրոց» ՊՈԱԿ**

(դպրոցի անվանումը)

**Ղեկավար՝ Լուսինե Ավանեսյան**

**<<Կապանի N 2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ**

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

2022թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....	2
Ներածություն.....	3
<b>«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ»</b>	
1. «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման նպատակն ու խնդիրները.....	5
2 .Սովորողների ստեղծագործական ունակությունների և ինքնուրույնության զարգացումը տեխնոլոգիայի դասին՝ որպես կրթական չափորոշչային պահանջ.....	8
3 .Դասավանդման իմ փորձից.....	14
Եզրակացություններ.....	18
Օգտագործված գրականության ցանկ.....	19

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«Տվեք երեխային հետաքրքրասիրություն: Պիտելիքը  
նա կգտնի ինքը»:* Անատոլի Գին

Անձի համակողմանի զարգացման խնդիրները միշտ էլ հետաքրքրել կրթության ոլորտի մասնագետներին: Այսօր այս խնդիրը հատկապես արդիական է՝ հաշվի առնելով, որ կրթութան համակարգը բարեփոխումների ինտենսիվ գործընթացի մեջ է: Դպրոցի նպատակն այս փուլում աշակերտի անհատականության ձևավորումն է, այդ թվում՝ ստեղծագործական ներուժի, ինքնուրույնության, պատկերավոր մտածողության զարգացումը: Ուսումնական գործընթացում ստեղծագործականության զարգացումն իրենից ենթադրում է սովորողների մոտ ուսումնական առարկաների նկատմամբ հետաքրքրության խթանում, համակողմանի զարգացման, ինքնավստահության մակարդակի բարձրացում, ինքնուրույն մտածողության ձևավորում: Ստեղծագործականությունը աշակերտին թույլ է տալիս երևակայել, ստեղծագործել, զարմանալ, լուծումներ գտնել ոչ ստանդարտ իրավիճակներում, ցուցաբերել քննադատական մտածողություն:

Այս նպատակներին հասնելու համար մանկավարժական գիտության և պրակտիկայի մեջ ինտենսիվ որոնումներ են կատարվում դասավանդման նոր, ոչ ստանդարտ ձևերի, մեթոդների հայտնաբերման ու կիրառման համար: Շրջանառության մեջ դրվում են ոչ ավանդական դասատիպերը, ուսուցման խնդրահարույց մեթոդները, կոլեկտիվ ստեղծագործական հնարները, հարցադրումների և խաղային տեխնոլոգիաների տեսակներ, որոք նպատակ ունեն խթանելու սովորողների առաջադիմությունը, կարողունակությունների ձեռքբերումն ու զարգացումը, ինչպես նաև ստեղծագործական գործունեության զարգացումը: Ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում սովորողների ստեղծագործականության զարգացման արդյունավետ միջոց կարելի է դիտարկել ժամանակակից դասավանդման մեթոդների կիրառությունը, որոնք մեծապես նպաստում են, որ սովորողը դուրս գա ավանդական մոտեցումներով պայմանավորված լսողի իր դերից, դասին լինի շարժուն, հնարավորություն ունենա կարծիք, դիրքորոշում, տեսակետ հայտնելու, քննադատելու մոտենալու այս կամ այն խնդրո առարկային, բանավիճելու, բանակցելու, համագործակցելու, հորինելու և հիմնավորելու:

Հանդիսանալով «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի ուսուցիչ՝ իմ մանկավարժական փորձի ընթացքում բազմիցս դիմել եմ ինտերակտիվ, համագործակցային մեթոդների, խաղային տեխնոլոգիաների օգնությանը: Ուստի հենվելով սեփական փորձիս և մեթոդամանկավարժական գրականության մեջ արված պնդումների վրա՝ կփորձեմ կառուցել սույն հետազոտական աշխատանքը՝ նպատակ ունենալով ցույց տալ կրթության ոլորտի բարերոխումներով պայմանավորված դասավանդման ժամանակակից մեթոդների ու հնարների կիրառման դերը սովորողների մոտ առարկայի չափորոշչային վերջնարդյունքներն ապահովելու տեսանկյունից:

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Հաշվի առնելով կրթության չափորոշիչներում հստակ սահմանված պահանջն առ այն, որ ուսուցիչը պարտավոր է դասապրոցեսի ընթացքում զարգացնել սովորողների ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և մի շարք առանցքային կարողունակություններ՝ աշխատանքիս թեմայի արդիականությունը պայմանավորում եմ պետական կառավարման մարմնի այդ պահանջի արդյունավետ իրականացման անհրաժեշտության կարևորմամբ:

**Հետազոտության նպատակը:**

- Ուսումնասիրել դասի ընթացքում սովորողների ստեղծագործականության զարգացման հնարավորությունները:
- Դիտարկել մանկավարժամեթոդական մի շարք հնարներ սովորողների մոտ առանցքային կարողունակությունների զարգացման տեսանկյունից:

**Հետազոտության խնդիրը:** Ցույց տալ դասավանդման ժամանակակից մեթոդների ճիշտ ու նպատակային կիրառման դերը դասին ընթացքում՝ սովորողների ստեղծագործականության զարգացման, առաջադիմության ապահովման և սովորելու մոտիվացիայի բարձրավման տեսանկյունից:

**«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ,  
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ  
ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ»**

**1. «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման նպատակն ու խնդիրները**

Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնային պարտականությունների թվին կարելի է դասել յուրաքանչյուր աշակերտի մեջ ճանաչել, բացահայտել մարդկային ներուժը, ընկալելու, հիշելու, երևակայելու կարողությունները, ինչպես նաև հետադարձ կապի օգնությամբ վեր հանել օժտվածության աստիճանը, հնարավոր դժվարությունները ուսումնառության գործընթացում: Այս ամենը շատ կարևոր են, որպեսզի ուսուցիչը պատկերացում ունենա իր աշակերտի իմացական ու գործնական կարողությունների մասին: Սա այն գործոնն է, որը կարող է բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը և աշակերտի առաջադիմությունը: Բարենպաստ կրթական միջավայրում առաջադիմող, ուսուցչի հետ համագործակցող սովորողն ունի լայն հնարավորություններ ստեղծագործական կարողություններ ձևավորելու համար: Այսպիսի միջավայրում ուսուցչի և աշակերտի միջև կա երկուստեք փոխհամաձայնություն, իրար օգնելու, խնդիրները լուծելու պատրաստակամություն: Տեխնոլոգիայի դասին սովորողները հնարավորություն է ունենում այլ ուսումնական առարկաներից ստացված գիտելիքները համակարգված օգտագործելու գործնական աշխատանքների իրականացման ժամանակ: Տարրական դպրոցի սովորողը «Մաթեմատիկա», «Կերպարվեստ» «Ես և շրջակա աշխարհը», «Բնագիտություն» ուսումնական առարկաներից ստացած գիտելիքներն ու հմտությունները ներ են դնում, որպեսզի տեխնոլոգիայի դասին ունենան առաջընթաց: Այսպիսի համակարգված ուսուցումը, որն ինչ-որ առումով ունի ինտեգրված բնույթ, զարգացնում է կրտսեր դպրոցականի աշխարհաճանաչողությունը, տալիս նրան մի շարք գործնական կարողություններ:

«Տեխնոլոգիա» առարկայի ուսուցման նպատակն ըստ կրթական աստիճանների նպատակաուղղված է «Հանրակրթության պետական չափորոշիչ» փաստաթղթով սահմանված մի շարք վերջնարդյունքների ձևավորմանը: Մասնավորապես տարրական դպրոցում այդ վերջնարդյունքներից են՝

- հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար, դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին, համատեղ կամ ինքնուրույն

իրականացնի պարզ ուսումնասիրություններ, կատարի առաջադրանքներ, անի պարզ եզրակացություններ և ներկայացնի ստացված արդյունքները,

- տարբերակի և կիրառի բնական ռեսուրսները խնայելու, մարդու կողմից շրջակա միջավայրը պահպանելու և բարելավելու ծները, մասնակցի բնապահպանական պարզ միջոցառումների, իմանա, որ շրջապատող աշխարհի ճանաչողության եղանակներից մեկը գիտությունն է, ներկայացնի մարդու և բնության վրա գիտության որոշ ձեռքբերումների ազդեցությունը, ունենա գիտելիքներ և հմտություններ օբյեկտները չափելու, հաշվելու, համեմատելու, նկարագրելու, դրանց քանակական, որակական և տարածական պարզ հարաբերակցությունները գնահատելու համար և այլն<sup>1</sup>:

Այսպիսով պարզ է դառնում, որ առարկան իր բովանդակությամբ կարող է հետաքրքրել կրտսեր դպրոցականներին, քանի որ բուն դասապրոցեսը իր մեջ ունի նրանց նախասիրություններին համապատասխանող տարրեր: Առարկայի դասավանդման ընթացքում սովորողները կարող են չափումներ ու հաշվարկներ կատարել, ծեփել, նկարել, հետաքրքիր ու ճանաչողական աշխատանքներ պատրաստել, ինչն էլ ավելի է ոգևորում նրանց՝ զուգահեռ ձևավորելով մի շարք առաջնային կարողունակություններ: Արդեն միջին դպրոցում, բնականաբար, աշխատանքներն ավելի խորը ու բովանդակային տեսք են ստանում: Սովորողն այստեղ կարիք է ունենում ավելի խորքային նախագիտելիքների, որպեսզի կարողանա հասկանալ ու ընթրնել ուսումնական նյութը: Հիմնական դպրոցում առարկայից ակնկալվել վերջնարդյունքներից են: Սովորողը պետք է՝

- իրականացնի չափումներ, կատարի մոտավոր ու ճշգրիտ հաշվարկներ և գնահատի արդյունքները՝ ընտրելով և օգտագործելով համապատասխան հասկացություններ, սկզբունքներ, նյութեր և սարքավորումներ, կիրառի երկրաչափական պատկերների և մարմինների մասին գիտելիքներն ամենօրյա կյանքում և հարակից ուսումնական առարկաներն ուսումնասիրելիս,
- վերլուծի, գնահատի և առաջարկի դասակարգման, տարբերակման կամ խմբավորման չափանիշներ՝ ելնելով խնդրի պահանջից, ներկայացնի գիտության նվաճումների, տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա, տարբերի ձեռնարկատիրական

<sup>1</sup> <http://escs.am/files/files/2020-07-28/26974fa49b53599082edfb486f62af22.pdf> Հիմնական դպրոցի «տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ եվ օրինակելի ծրագիր

գործունեության տեսակները և իրականացման ձևերը, նկարագրի կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը բիզնես գործունեության մեջ,

- գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ, դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր, ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ և այլն<sup>2</sup>:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակներն ու խնդիրները նպատակամղված են ստեղծագործ, ինքնուրույն, նախաձեռնող, կշռադատող, տրամաբանող անհատի ձևավորմանը: Այսպես սովորողները ձեռք են բերում բազմաթիվ գործնական հմտություններ, ծանոթանում են մի շարք հասարակական երևույթների, էթիկայի նորմերի, ճանաչում ու տեսնում են աշխարհը, բնությունը և մարդուն այդ ամենի կենտրոնում: Կարծում եմ՝որ առարկան շատ կարևոր գործառույթ է իրականացնում՝ ցույց տալ սովորողին քաղաքացի, հասարակության անդամ լինելու իր դերը: Այստեղ նույնպես կցանկանանք շեշտադրել դասավանդման մեթոդների և ուսուցման ձևերի ճիշտ ընտրությունն ուսուցչի կողմից, ինչը ուղիղ համեմատական է սովորողների համաչափ ներգրավվածությանն ու առաջադիմության բարձրացմանը:

---

<sup>2</sup> Նույն տեղում:

## 2. Սովորողների ստեղծագործականության զարգացումը դպրոցում՝ որպես կրթական չափորոշչային պահանջ

Խոսելով ստեղծագործականության մասին՝ հարց է ծագում. կյանքի ո՞ր ոլորտում և ի՞նչ նպատակների հասնելու համար է աշակերտին անհրաժեշտ ստեղծագործականությունը: Բարեբախտաբար, մարդկությունն իր առջև միայն լուծելի խնդիրներ է դնում: Դեռ մարդկության ձևավորման ակունքներում մարդը սովորեց իր համար հագուստներ, զենքեր, կենցաղային իրեր պատրաստել: Որոշ ժամանակ անց ցանկացավ, որ հագուստը լինի գեղեցիկ, կուժն ու բաժակը՝ նկարագարով: Ուստի սկսեց ստեղծագործաբար մոտենալ անհրաժեշտություններին ու դրանց մեջ դրեց ստեղծագործական միտք, գեղագիտություն: Ներթափանցելով ստեղծագործականության մեջ մարդը հասկացավ, որ այն մի ամբողջական համակարգ է, որն ունակ է զարգացնել գեղագիտական ճաշակ, քննադատական, համեմատական, ճանաչողական կարողություններ, պատասխանատվության զգացում, նորարարություն: Այդպես է նաև այսօր: 21-րդ դարի աշակերտը ավելի ձկուն է, հետաքրքրասեր, նորարար, ուստի ստեղծագործականության զարգացումը մեծ դեր է խաղում նրա՝ հաջողություններ ունենալու, կյանքում առաջ գնալու հարցերում: Պարզվում է, որ բնությունը մեծահոգաբար զարգանալու հնարավորություններով է օժտել գրեթե բոլոր երեխաներին: Եվ յուրաքանչյուր երեխա կարող է գրանցել մեծ հաղթանակներ թե՛ ուսումնառության մեջ, թե՛ կյանքի այլ ոլորտներում՝ ստեղծագործական գործունեության միջոցով: Այդուհանդերձ, նշեմ, որ ստեղծագործականությունը ինքն իրենով չի զարգանում, դրա վրա հարկավոր է աշխատել, զարգացնել, ստեղծագործական հմտությունների կիրառման համար ստեղծել նպաստավոր պայմաններ: Այդ գործին է նվիրված ուսուցիչը, ով նույնպես ոգևորվում է իր սովորողների ստեղծագործական հաջողություններով: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ<sup>3</sup>»:

Զարգացող ստեղծագործական կարողությունը, որը մարդը դադարում է կիրառել գործնականում, ժամանակի ընթացքում կորչում է: Միայն մշտական կիրառության միջոցով կարելի է պահպանել ու զարգացնել համապատասխան կարողությունները: Մովռոդի ստեղծագործական ներուժը զարգանում է տարբեր խնդիրների լուծման գործունեության ընթացքում: Առաջացող խնդրահարույց իրավիճակը պահանջում է կոնկրետ լուծում: Կարելի է ասել, որ ստեղծագործությունը ստեղծագործական խնդիրների լուծումն է: Միաժամանակ ստեղծագործական առաջադրանքը սահմանում ենք այսպես. սա մի իրավիճակ է, որն

<sup>3</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 10:



առաջանում է ցանկացած տեսակի գործունեության ընթացքում՝ պահանջելով նոր մեթոդների և տեխնոլոգիաների որոնում, գործողության ինչ-որ նոր սկզբունքի, արժեքի ստեղծում:

Այսպիսով, կարող եմ վստահաբար պնդել, որ աշակերտի ստեղծագործականության զարգացման վրա մեծ է ուսուցչի ուղիղ ազդեցությունը: Սակայն այս գործընթացն ավելի է դժվարանում, երբ կրթական ոլորտում նկատվում է այդ գործունեության համար համապատասխան հմտություններ ու կարողություններ ունեցող ուսուցչական կազմի պակաս: Ուստի այս գործընթացի համար անհրաժեշտ մանկավարժական պայմաններ ստեղծել, որպեսզի ուսուցիչն ինքը հնարավորություն ունենա ինքնակրթվելու, զարգանալու, համապատասխան մասնագիտական որակներ ձեռք բերելու: «Ուսուցիչը պարտավոր է. մասնագիտական ընդհանուր եւ հատուկ կրթություն իրականացնելու նպատակով անընդհատ կատարելագործել իր մանկավարժական գիտելիքներն ու հմտությունը<sup>4</sup>»: Կրթության գործընթացում ստեղծագործ անհատականության զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր հիմնախնդիրներից մեկն է: Որպես կրթության բարձրագույն նպատակ է համարվում ինքնազարգացող անհատականության ձևավորումը, ով ունակ է համագործակցել ստեղծագործական միջավայրի և հասարակության հետ: Սա նաև հանրակրթության նկատմամբ պետության տեսակետն է: « Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը»<sup>5</sup>:

Հարց է առաջանում, թե ինչպիսի եղանակներով է հարկավոր պլանավորել ու նախագծել տեխնոլոգիայի դասի ընթացքը, որ հնարավոր լինի զարգացնել աշակերտի ստեղծագործական մտածողությունը, ինքնատիպությունը, նախաձեռնողականությունն ու ինքնուրույնությունը, որպեսզի վերջինս իր առջև դրված խնդիրների հնարավորություն ունենա տալ ճիշտ, գեղեցիկ ու կառուցողական լուծումներ: Առաջին ու կարևոր նախապայման այս ընթացքում կհամարեն երևականության զարգացումը: Երևակայության զարգացումը կարևոր պայման է ինտելեկտի, ստեղծագործական կարողության և, ընդհանրապես, մտավոր զարգացման համար: Դպրոցականների մոտ երևակայության հետևողական զարգացումը վերածվում է ինքնուրույն ներքին գործունեության, որը թույլ է տալիս հորինել, ստեղծագործել, մոդելավորել, ձևավորել: Այս կարողություններն ուղիղ կապ ունեն նաև գեղագիտական պատկերացումներ զարգացման հետ: Ստեղծագործական երևակայությունը երևակայության մի տեսակ է, որի ընթացքում անձը

<sup>4</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0> << օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:

<sup>5</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362> <<հանրակրթության մասին օրենք, հոդված 5, կետ 4:

ինքնուրույն ստեղծում է նոր պատկերներ և գաղափարներ: Ստեղծագործական երևակայությունը մարդու ստեղծագործական գործունեության բոլոր տեսակների անհրաժեշտ բաղադրիչն ու հիմքն է:

Ստեղծագործական երևակայության զարգացման համար իր ուրույն դերակատարումն ունի «Տեխնոլոգիա» ուսումնական առարկա, որի ուսուցման շրջանակներում աշակերտին տրվում է հնարավորություն իր հետաքրքրություններն ու նախասիրություններ գտնել հենց դասի ընթացքում: Տեխնոլոգիան գիտելիքների, հմտությունների, արժեքների և վերաբերմունքի նպատակային կիրառումն է մարդկային կարիքներն ու ցանկությունները բավարարող ապրանքներ կամ համակարգեր ստեղծելու համար: «Տեխնոլոգիա» ուսումնական առարկայի նպատակը ստեղծարար, նորարար, նախաձեռնող, ձեռնարկատիրական մտածողություն, ազգային նկարագիր ունեցող անձի ձևավորումն է, ով արվեստին ու արհեստին հաղորդակցվելու, աշխատանքի պրակտիկ ձևերին և նորագույն տեխնոլոգիաներին տիրապետելու, ռեսուրսներն արդյունավետ տնօրինելու միջոցով ստեղծում է մարդկային կարիքներին ու ցանկություններին համապատասխանող ապրանքներ, ծառայություններ և համակարգեր: Այն տեխնոլոգիական միջավայրի և արտադրական գործընթացների նկարագրությանը, գաղափարները գործողության վերածելու հմտությունների ձևավորմանը միտված շարունակական գործընթաց է, որի նպատակը մարդու բարեկեցությունն է: Նախաձեռնողականության և ստեղծարարության տեխնոլոգիական մոտեցումն իբրև համընդհանուր ավգորիթմ որոշում է ուսումնական առարկայի նպատակը: Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին<sup>6</sup>:

Մովորողների ստեղծագործականության զարգացման միջոց են նաև խաղային տեխնոլոգիաները: Նման խաղերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ խաղային խնդիր լուծելու համար աշակերտից պահանջվում է հնարամտություն, ոչ ստանդարտ, ստեղծագործական մտածողություն, ինքնատիպություն: Կարելի է ասել, որ խաղային տեխնոլոգիաների դերը դասավանդման գործընթացում կայանում է հենց աշակերտների ստեղծագործական կարողությունները զարգացնելու մեջ, ինչը զուգակցվում է գիտելիքաստեղծ գործունեության հետ:

---

<sup>6</sup> <http://escs.am/files/files/2020-07-28/26974fa49b53599082edfb486f62af22.pdf> Հիմնական դպրոցի «տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ եվ օրինակելի ծրագիր:

Հայտնի է, որ խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և մարդուն ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Անշուշտ, դիդակտիկ խաղերի միջոցով ուսուցումն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող են պնդել, որ դպրոցում խաղային մեթոդներով ուսուցման ընթացքում կարելի է զարգացնել սովորողի կապակցված խոսքը, պատկերավոր մտածողությունը: Խաղային գործունեության մանկավարժական նշանակությունը երեխաների կյանքում կարևորել են Ա. Կոմենսկին, Խ. Աբովյանը, Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը և այլք: Խ. Աբովյանը մանկավարժների հորդորում էր «չգրկել երեխային անմեղ խաղերից»: Հ. Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի բնական օրգանական պահանջն է, նրա էությունը: Խաղային ուսուցումը ենթադրում է տարբեր հիմնախնդիրների լուծումներ՝ կապված մասնագիտական գործունեության, մարդկային փոխհարաբերությունների, անձնական դժվարությունների հետ: Խաղային ինտերակտիվ տեխնոլոգիաների հնարավորությունները բավական լայն են.

- Դրանք թույլ են տալիս ընդգրկել հիմնախնդիրների լայն ասպեկտ:
- Համապատասխանում են գործունեության տրամաբանությանը:
- Նպաստում են ուսումնական գործընթացի մասնակիցների՝ առավել մեծ թվով ընդգրկմանը, նրանց մղում են հանպատրաստից ակտիվության:
- Ավելի հեշտությամբ են հաղթահարվում կարծրատիպերը:
- Հնարավորություն է ստեղծում համակողմանի վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու:
- Նպաստում են անձի բոլոր որակների՝ անհատական դրական և բացասական ընդունակությունների արտահայտմանը և այլն<sup>7</sup>:

Դպրոցականների ստեղծագործականության զարգացմանը նպաստում են նաև դերային խաղերը: Նմանօրինակ իրավիճակում աշակերտը ձերբազատվում է հնարավոր վաղերից, չի կաշկանդվում, ցույց է տալիս իր օժտվածությունն ու տաղանդը: Դպրոցում կիրառվում է դերախաղի օգնությամբ ուսուցում, աշակերտները բեմականացնում են տվյալ ստեղծագործությունը, կամ զանազան ակտիվ խաղային հնարներով սովորում են՝ զուգահեռ սովորեցնելով միմյանց: Դերային խաղերի կիրառության արդյունքում համաչափորեն ձևավորվում

---

<sup>7</sup><http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf> Լ.Վ. Գևորգյան, « Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները», Մանկավարժություն հանդես, 2015, էջ, 75:

են խոսքի նոր տեսակներ՝ խոսք, որը խաղի մասնակիցներին հրահանգներ է տալիս, խոսք-հաղորդում, որը տպավորությունները մեծերին հաղորդող խոսք է, նկարագրական խոսք, դատողական խոսք, գնահատող խոսք: Մովորոշող սկսում է կարևորել ընկերների խոսքը, ընկալել խոսքային հարաբերությունները, մեծերի և տարեկիցների հետ ազատ զրույցի է բռնվում, ճշգրիտ և ամբողջական նախադասություններով կարողանում են պատասխանել իրեն տրված հարցերին, լրացնել ու շտկել ընկերների պատասխանները: Արդյունքում՝ ձևավորվում է նաև համագործակցության մեջ աշխատելու կարողություն, որտեղ ամեն աշակերտ ունի իր հստակ անելիքը և հավասար չափով կիսում է իր բաժին առաջադրանքը կատարելու պարտավորությունը: Ստացվեց, որ աշակերտի մոտ զարգանում է նաև պատասխանատվության զգացումը և թիմում իր կայուն դերն ունենալու, իր կարծիքը արտահայտելու և իրեն գործնականում դրսևորելու զարգացման հիմքն է: Քանի որ ուսուցման հիմքում ընդհանուր առմամբ խաղն է, ուստի աշակերտները հաճույքով են մասնակցում դասին: Ուսուցչի դերը աշակերտի ստեղծագործականության զարգացման համար ունի հիմնարար նշանակություն: Այս ուղղությամբ ուսուցչը կարող է տանել տարաբնույթ աշխատանքներ, այդ թվում՝ կարողությունը: Դերային խաղերի միջոցով ուսուցումը երեխայի սոցիալական

- Մովորոշի ստեղծագործական ներուժի բացահայտում:
- Մովորոշին ուղղորդում, աշխատանքի կազմակերպման ձևերին ծանոթացում:
- Մովորոշին խրախուսում, մոտիվացիա, կատարված աշխատանքի գնահատում:
- Հետադարձ կապի ստեղծում, ինքնանդրադարձի հնարավորություն:
- Մեթոդամակավարժական մոտեցումների ճիշտ ընտրություն:
- Ստեղծագործականության մեջ աշակերտինն անհրաժեշտ միջոցներով օժանդակում:

Ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում սովորողների ստեղծագործականության զարգացման վրա մեծ է նաև աշակերտակենտրոն դասի նշանակությունը, որը խթանում է սովորողների համագործակցությունը, ակտիվությունը դասին, բացահայտելու, նախագծելու հետազոտելու կարողությունները: Իմ մանկավարժական փորձին հղում անելով՝ կարող եմ պնդել, որ համագործակցային մեթոդների վրա հիմնված ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները խորքային ընկալվում են սովորողների շրջանում, ինչը չեն կարող ասել դասի ավանդական կառուցվածքի մասին: Եթե սովորողն ունի հնարավորություն իր դասընկերների հետ համատեղ աշխատելու, ստեղծագործելու, ապա աշխատանքի ընթացքը վերջինիս համար դառնում է հրապուրիչ, նա սիրով է մասնակցում դասին, սովորում է, սովորեցնում: Արդյունքում զարգանում է վերջինիս սովորել սովորելու կարողունակությունը, որի շրջանակներում սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ

արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ժանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն<sup>8</sup>:

Սովորողների ստեղծագործականության զարգացման հաջորդ գրավականը վերջիններիս ինքնավստահության ձևավորումն է, հավատը ստեղծագործական խնդիրները լուծելու ունակության նկատմամբ, այսինքն՝ ստեղծել հաջողության իրավիճակ: Նրանք, ովքեր չեն հավատում իրենց ուժերին, ունակ չեն հաջողելու, ուստի այստեղ ևս կարևոր է ուսուցչի կառուցողական մոտեցումը: Հանդիսանալով տեխնոլոգիայի ուսուցիչ՝ իմ մանկավարժական գործունեության ընթացքում կիրառել եմ բազմաթիվ մեթոդական հնարներ, դասի տիպեր, գործնական և խմբային աշխատանքներ, ցուցադրական դասեր, S<S գործիքներ, ինչպես նաև հարցադրումների մեթոդը, որպեսզի աշակերտների մոտ ձևավորեն ստեղծագործականություն: Կիրառել եմ բազմապիսի միջառարկայական կապեր, նպաստել աշակերտների գեղագիտական, աշխատանքային դաստիարակության գործընթացի արդյունավետությանը, զարգացրել եմ վերջիններիս սոցիալական հմտությունները, բացահայտել տաղանդները, խրախուսել ցանկացած կատարված աշխատանք:

Կարծում եմ, որ այս հետազոտական աշխատանքի արդյունքում կատարածս պնդումներն ու արձանագրումները իրենց դրական ազդեցությունը կունենան իմ մասնագիտական որակների բարձրացման վրա:

---

<sup>8</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> ՀՀ կառավարություն ռ ր ո շ ու մ 4 փետրվարի 2021 թվականի ռ 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի ռ 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

### 3. Դասավանդման իմ փորձից

Իմ մանկավարժական գործունեության ընթացքում բազմիցս կիրառել եմ դասավանդման ժամանակակից մեթոդներ, S<S գործիքներ, որպեսզի ապահովեն սովորողների համաչափ մասնակցությունը դասին և դասի դինամիկան: Ստորև կներկայացնեմ նմանօրինակ դասի օրինակ:

**Դասագիրք՝** «Տեխնոլոգիա» /Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան Երևան Տիգրան Մեծ 2020/:

**Թեմա՝ 1. «Կաթնամթերքների տեսակները և նրանց նշանակությունը սննդում»**

**Թեմա՝ 2. «Կաթով, կաթնամթերքով կերակրատեսակների պատրաստում»**

**Առարկա՝** Տեխնոլոգիա

**Դասարան՝** 6-րդ

**Օգտագործվող Նյութեր՝** Կաթնամթերք, ջեռոց, խոհանոցային պարագաներ

**Դասի նպատակը՝**

Սովորողներին հաղորդել գիտելիքներ կաթնամթերքի պատրաստման, դրա տեսակների, պահպանման կանոնների մասին:

Կաթնամթերքի զանազան տեսակներից պատրաստել տաք կերակրատեսակներ, նախուտեստներ:

Մշակութային կարողունակության զարգացում:

**Դասի Վերջնարդյունքը՝**

Սովորողները պետք է իմանան մածուկի, կաթնաշոռի, կարագի, թթվասերի, չորաթանի, սերուցքի, պանրի բաղադրությունը, պատրաստման եղանակները, կարողանան դրացով պատրաստել կերակրատեսակներ:

Իմանան, թե ինչ գործառույթ է կատարում կաթնամթերք պատրաստող մասնագետը, ծանոթ լինեն դրանց պատրաստման համար անհրաժեշտ սարքավորումներին

Սովորողները ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները:

Նրանք ի վիճակի են զարգացնել սեփական ազգային մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր, նյութական, ոչ նյութական ժառանգությունն:

**Դասի տիպը՝** գործնական

**Օգտագործված մեթոդներ՝** «Խմբային քննարկումներ», «Վեների դիագրամ», «ԳՈՒՍ», «Գիտելիքների քարտեզագրում»:

**Տերմիններ՝** Մածուն, կաթնաշոռ, կարագ, թթվասեր, չորաթան, սերուցք, պանիր, կաթնաթթվային մանրէ:

### ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Սովորողների նախագիտելիքները թեմայի շուրջ պարզելու նպատակով կտրվի հայտորոշիչ թեստ:

- 1. Ի՞նչ գիտեք չորաթանի մասին:
- 2. Ինչպե՞ս է պատրաստվում թթվասերը:
- 3. Ի՞նչ ավանդական տեխնոլոգիաներ գիտեք, որոնց օգնությամբ պատրաստում են կարագ:
- 4. Կաթնամթերքի հիմքով ի՞նչ տաք ուտեստեր գիտեք:
- 5. Ի՞նչ է կաթնաթթվային մանրէն:

Հաջորդիվ կկատարվեի սովորողների նախնական գիտելիքների քարտեզագրում ուսուցանվող թեմայի շուրջ: «Վեների դիագրամ» մեթոդի կիրառմամբ սովորողները ցույց կտան կաթնային հիքով պատրաստված սննդամթերքների նմանություններն ու տարբերությունները: Խմբային քննարկումների մեթոդով ուսուցիչը կպարզի սովորողների նախասիրությունները՝ հնարավորություն տալով վերջիններիս պարզաբանել մթերքների առնչությամբ իրենց նախապատվությունները: Այստեղ ուսուցիչը հանդես կգա բացառապես ուղղորդողի դերում՝ նպաստելով, որ սովորողները միմյանց հետ համագործակցեն, ինքնուրույն հետազոտեն ու հավաքագրեն տեղեկություններ: Դասի հիմնական գաղափարները ընթրնելու համար

սովորողներին կտրվի ժամանակ համացանցից գտնել ու հավաքագրել տեղեկություններ: Կազմել փոքր խմբեր և իրականացնել խմբային քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ՝

- Ի՞նչ սարքավորումներ գիտեք, որոնց օգնությամբ վերամշակում են կաթն ու ստանում այլ մթերքներ:
- Ի՞նչ ազդեցություն ունեն կաթնային հիմքով պատրաստված մթերքները մարդու օրգանիզմի համար:

Գործնական աշխատանքի շրջանակներում սովորողների ուսուցչի ուղղորդմամբ կպատրաստեն թանապուր, կծանոթանան ապուրի պատրաստման մի քանի բաղադրատոմսերի:

Դասն կամփոփվի «ԳՈՒՍ» մեթոդի օգնությամբ


- **ԳԻՏԵԻ**
- **ՈՒԶՈՒՄ ԷԻ ԻՍԱՆԱԼ**
- **ՍՈՎՈՐԵՑԻ**

Հաջորդիվ ուսուցիչը դասը կամրապնդի ամփոփիչ հայտորոշիչ բանավոր հարցմամբ:

1. Ինչպե՞ս պատրաստել թանապուր:
2. Ի՞նչ է խնոցին:
3. Ի՞նչ է սերուցքը:
4. Իչպե՞ս են վերամշակում ու ստերիլիզացնում կաթը:
5. Ի՞նչ վիտամիններով է հարուստ կաթը:



## ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԹԵՍՏԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



**Գնահատում**՝ Ուսուցչի վերահսկողությամբ սովորողներն իրականացնում են փոխադարձ գնահատում:

**Տնային աշխատանք**՝ Հավաքել տեղեկություն Հայաստանում պանրագործության մասին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, եթե ընդհանրացնենք մեր ուսումնասիրության արդյունքները, կարող ենք կատարել հետևյալ արձանագրումները՝

- Սովորողների կրթության, դաստիարակության լիարժեքության համար, պարտադիր պայման է վերջիններիս ստեղծագործականության ձևավորումն ու զարգացումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնական ծրագրերով նախատեսված առարկաների, ինչպես նաև արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումների, էքսկուրսիաների շրջանակներում:
- Կիրառելով ժամանակակից մեթոդներ՝ ուսուցիչը կարող է միջավայր ստեղծել, որպեսզի զարգանա սովորողի ստեղծագործականությունը:
- Ուսուցչի մասնագիտական որակները, նորարարական գաղափարների ներդրումը դասին մեծապես կօգնի սովորողին նույնպես հանդես գալ որպես նորարար, նախաձեռնող ու ստեղծագործ:
- Ուսումնական գործընթացում կիրառվող մեթոդները, ակտիվ ու աշակերտակենտրոն դասերը ուղիղ ազդեցություն կարող են ունենալ սովորողի ստեղծագործականության զարգացման, ինքնուրույնության և նախաձեռնության խթանման :
- Սովորողների կրթության, դաստիարակության լիարժեքության համար կարևոր է մշակութային կարողունակությունը : Մենք աշխարհին ենք ներկայանում ոչ միայն հոգևոր և մշակութային արժեքներով, այլ նաև ազգային հարուստ խոհանոցով :

Կարծում ենք՝ այս ուսումնասիրությունը կունենա իր դրական ազդեցությունը մեր մանկավարժական հետազա գործունեության վրա:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <http://escs.am/files/files/2020-07-28/26974fa49b53599082edfb486f62af22.pdf>  
Հիմնական դպրոցի «տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ եվ օրինակելի ծրագիր:
2. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345> «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք::
3. <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2336&Reading=0> ՀՀ օրենքը ուսուցչի կարգավիճակի մասին:
4. <http://gspi.am/media/journal/2015n1b/8.pdf> Լ.Վ. Գևորգյան, « Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները», Մանկավարժություն հանդես, 2015, էջ, 75:
5. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788> ՀՀ կառավարություն ռ ռ ո շ ու մ 4 փետրվարի 2021 թվականի ո 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի ո 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. «Տեխնոլոգիա» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (1-6-րդ դասարաններ) (Հրաման 22-Լ, 30.04.2021 թ.)  
<https://escs.am/files/files/2021-05-06/52281f19fbac2f31da817f6997111733.pdf>